

ՔՈՒՉՅԿ ՆՈՆՈՊԵՏԻ ԵՐԳԵՐԸ

(Շուէր պ. Մ. Արևդեանին).

Բ.

Նահապետի գաղափարները և զգացմունքները. կնոջ սէրը նրա երգերում և նրա ետրը. ա. գրքից արած պատմութիւնները. Նահապետի խրատները. ժամանակակից կեանքի նկարագրի բացակայութիւնը Նահապետի երգերում:

Նահապետի երգերում, ինչպէս և ցոյց է տալիս ընդհանուր վերնագիրը, մեծ տեղ պիտի ըռնէին «հողու և սիրու» վերաբերեալ երգերը. և ալըպէս էլ է, սակայն «սիրու» երգերը քանակով աւելի շատ են: Իր ալը սիրու երգերում Նահապետը երգում է մի սիրահարուած երիտասարդի պէս իր «եարը», որ գրեթէ մինչև վերջը նրա համար անմատչելի մի բան է մնում. Երգչի համար պարզ չէ թէ երբ սկսուեց իր մէջ ալը սիրու զգացումը կամ թէ ինչպէս լառաջացաւ ալը: Այսքանը միայն գիտէ, որ ինքը «անմեղ կանգնած» էր և նրա սէրը «զէտ նետի չարխէն ելաւ ու եկաւ իր սիրտը գամուեցաւ»: Ինչ և իցէ, նրա համար անբացատրելի կերպով ծնունդ է առնում նրա մէջ սիրու զգացումը և այնուհետև նա ամբողջ սրտով նուիրում է իր ետրի գովասանքին:

Նրա ետրը «հաներ է գունդգուն կապալ, կոճակ շարեր, որի օղակն է կանանչ» և իր ետրի ալը երկինքնանդ շորերից հիացած բացականչում է՝ «մտիկ իմ ետրին արէք, զինչ հագեր ամենն է կանանչ»: Ալը կանաչ շորերով ետրը, որ աննման է և «մալրն չէ բերեր նրան նման», ունի «սիրուն երես», որ լուսին ի մօտն է գերի, թուլս աչք ու կամար ունեք, որ քան զծոյն կու զարնէ ալի» (43 եր.), ալը և «ալիքի նման վարսեր ունի, որ քամին կանէ տարուբեր», ուրի

ծառից աւելի հասակ ունի և ամբողջութեամբ սքան զկարմիր խնձոր բուրբերո) է: Այսպիսի մի գեղեցիկ եարի սիրով թափառում է երգիչը և հանդիպած գետակին՝ դիմելով իր սիրտն էլ նորա մօտ է բաց անում, նրան էլ իրեն պէս սիրահարուած է երեակալում որ դժուածի պէս օր ու գիշեր դէպի «օտար աշխարհ» է գնում իր եարին հասնելու: Այս գետակի պէս ինքը երգիչը ևս ճանապարհ է ընկնում դէպի իր եարի տունը: Նա առնում է Վիարջիկ մը անուշ գինի ու «խօշեարի դուռն է գնում», կանչում է Վիարջարում զդուռն բաց, ձիւն եկեր ոտվիս կու մըսի», բաց դուռը չի բացւում: Երգիչը հասկանում է, որ իր եարից իրեն զատողը նրա մայրն է, ուստի երգում է.

«Արակն ի լերկնից ի վայր թող

Ձքո մայրն ամէն էրէ,

Որ զիս ի քէն իզատ,

Ձքեզ չիսնէ օտար կու պահէ» (35.):

Այսպէս երգիչը չտեսնելով իր եարին հիւանդանում է, «դեղնում, խնկի նման» է դառնում ու «զափրանի» գոյն ստանում և հաստատ իմանալով որ դեռ մահուան օրը չի եկել այլ իր եարի սիրուցն է հիւանդացել, թուղթ է գրում կամ «բարձրագնաց լուսնի» միջոցաւ բարև է ուղարկում իր եարին ասելով թէ.

«Առ ինձոր արեկ զիս ի տես

Ձիմ ցաւուն դեղն դու գիտես

Ինձ օտար հէքիմ չի բերես» (28):

Այնուամենայնիւ եարը իւր սովորութեան համաձայն միշտ խաբում է երգչին և երգիչը շատ համբերելուց լեռող այս անգամ էլ բարկանում է ասելով՝

«Քանի կենում քեզ ապով,

Քանի մէկ էրիմ կրակով...

Կշտացեր եմ սուտ խաբելով.

Թէ չես սիրեր ըղորդ սրտով,

Սուրբ Սարգիս, Աստուած քեզ խռով»:

Սակայն Քուչակ Նահապետը այսքանով չի բաւականանում. նա շարունակ մէկը միւսից գեղեցիկ պատկերներով երգում է իր սէրը և եթէ ընթերցողը կամ ունկնդիրը այս կերպ չի հասկացել նրա սիրտը, զգացմունքը, աշխատում է մի այլ աւելի գեղեցիկ և պարզ պատկերով լարտնել նույնը: Եւ ահա նա դիմում է ծաղիկների մի խմբի, որոնց միջից ընտ.

ըսւմ է վարդին, որովհետեւ սա իր եարին նման է: Նա այդ վարդին պահում պահպանում է իր աչքի լուսի պէս, չի թողնում նոյն իսկ որ այդ վարդը օտար ջրով ջրուի, որ մի գուցէ չորանայ, այլ իր «աչքից առու է հանում» և իր արտասուքի առուակով նրա արմատներն է ջրում, որ «պալծառանար» (44): Եւ երգիչը իր այդ վարդ-եարին «էմանէթ» է տալիս իր հաւատարիմներին, որ վարդի մէջ պահեն միշտ. ինքը օտարութեան է դնում և պատուիրում՝

«Թէ երթամ ու շուտով դառնամ
Չամանաթըս ի տէր հասուցէք,
Թէ երթամ խարիպուկ մեռնեմ,
Վարդն ձեզ, դտէրն լիշեցէք» (30):

Այդ օտարութեան մէջ նա մի գերի է երեւակայում իրեն, որ միայնակ մնալով օրերը լալով է անցնում և վախենալով թէ մի գուցէ շատ լաց լինելուց աչքերից զրկուի, մարդ է ուղարկում եարի մօտ ասելու թէ՝

«Լսեր եմ որ վարդ ունիս,
Ուղարկի տէստէ մի գերուս.
Պագնեմ աչերուս դնեմ
Որ դադրի աչերս ի լալուս» (40):

Մի ուրիշ անգամ երգիչը սկսում է զանազան նմանութիւններով իր և իր եարի ինչ լինելը պարզել. այսպէս օրինակ, նրա եարը մի մատանի է, իսկ ինքը երգիչը այդ մատանու անբաժան ակն. կամ ուր «պաշ աղբիւր մի կար եարը այդ աղբիւրի մօտի «կանանչն» է, իսկ ինքը «ցօղն ի վերար». եարը մի խնձոր է ծառի ճղին իսկ ինքը «կանաչ թփիկ ի վերար». թող փորձէ մէկը քաղել այդ խնձորը և անա կտորանալ թէ թուիւր և թէ ամեն ինչ: Այդպիսի եարին սիրող երգչի սիրտը համակուած է մի անհուն, մեծ սիրով, և այդ սէրը իր անհունութեամբ գտնուում է մի «անլատակ ծովի» մէջ, ուր «քեաֆեր ալին է պահպան». երգիչը լողում է այդ անհուն ծովում և շատ սել ու մուտ» անում, որպէս զի «սիրոյն տիրանալ» կարողանայ, այդ սիրոյն, որ «աչխարճ զալով եկաւ նրա սիրտը թառեցաւ, հապա իր սրտէն ի դուրս ելաւ չերկրէ չերկիր թափեցաւ» ապա եկաւ նորա «զլուխը ելաւ և լղեղն ելաւ թառեցաւ, աչիցն արտասուք ուղեց»,—նա արին ի վար վաթեցաւ» (33): Բայց երբ պատահում է, որ իր եարին որ և է կերպով ձեռք է բերում, այդ դէպքում, քանի որ եարը ի-

մօտն է, նրան ժամանակը թուում է դարուն, «կանաչ ու ցօղն ի վերայ», բայց երբ հարը հեռանում է, կարծես արդէն ձմեռ է, «ձիւն եկեր եղեմն ի վերայ»: Նրա հարը իր մօտն է և հասնա ուղում է որ գիշերը երկարանալ և եթէ հնար է, մի տարի դառնալ:

«Իմ եարն ինձի հիւր եկեր,
Առաւօտ, դու ի դատ կեցիր,
Որ դմեր խաղն կաւիրես.
Գաս զլուսն ի վերայ բերես,
Ձիս իմ եարէն բաժանես» (29):

Սրգչի երջանկութեանը գրեթէ չափ չկալ. նա պատկերով ներկայացնում է իր անցեալ վիճակը թէ ինչպէս իր սիրտը մի կաթնալ էր մինչև այժմ, որի մէջ եփում էր եարի «դուստան», իր «անձիկը չոր փայտ էր եղեր ու զկրակն ի վառ կու պահէր», սակայն եթէ միսը եփելուց լետու կրակը դադարեցնում են, իսկ իր սրտի կաթնալում թէև «թողեր է միսն զիւր ոսկորն «բայց և արնպէս աղեռ ի կրակն փայտ կու ձգգէր»,—մինչև հիմա այս դրութեան մէջ էր և այժմ որ պիտի մխիթարուէր և իբրև փայտ՝ վառուելուց առ ժամանակ ազատ մնար-կրկին նրան չի լաջողում եարին մօտենալ, դարձեալ անմխիթար է մնում: Իր այս վիճակը ինքը երգիչն էլ չի հասկանում. մի անորոշ, տարտամ վիճակ է, կարծես անմատչելի մի բանի է ձգտում և արդ անհաճու դրութիւնից ելնելու համար վերջապէս դիմում է եարին և կէս՝ խնդրքի ու կէս՝ պահանջի ձևով ասում է. «կամ առ զիս ի ծոցդ ի քուն

կամ տէսթուր տուր երթամ ի տուն»:

Եւ երբ անողոք եարը ոչ այն է անում և ոչ էլ միւսը, այլ ասում է որ «հանցեղ երերուն (պիտի) պահեմ մինչ որ գալ լուսն առաւօտուն» (43)—երգիչն այլ ևս դիմանալ չի կարողանում և անիծում է եարին հետեւեալ ձևով.

«Ես մեռնեմ ի քո վերայ
Դու զքո ծամդ կտրես,
Կտրես մաշալալ վառես
Ձեռքդ առնուս ու դիս փնտռես»...

Գաս իմ հողակոտի վրայից անցնես, տեսնես խղճուկիս չիբիմը, աչքերդ լցուին լորդահոս արցունքով, վզիս փայել կամենաս, բայց փոխարէնը (ապառաժ վէմս) զրկես ու համբուրես (44):

Մի ուրիշ տեղ Գուշակը երանում է այն քաջին, «որ առեր իւր եարն է փախեր, ոնց որ զկամուրջն անցեր, ջուրն էլէր զկամուրջն է տարեր և ձնիկ, սղեմնիկ եկեր, զտալնուն հետքն է կորուսեր» (27)։ Բայց ինքն էլ վերջապէս այս անօթաւոր աշխարհից զզոււմ է և համոզում է եարին որ միասին «լալն աշխարհն» գնան, այն աշխարհում մնան, անվախ ու ապահով ապրեն և չմնան այս աշխարհի վրայ ու շարունակ «դողան թէ ինչ կու լինի»։

Այսքան, և դեռ աւելի շատ ձեւերով Նահապետը երգում է իր եարին որպէս մի սիրու առարկայ միայն. նրա երգերից երևում է որ նրա ետըր միայն մարմին ունի առանց հոգու և առանց ներքին գեղեցկութեան։ Թէ ունի արդեօք Նահապետը ուրիշ երգեր ևս որոնց մէջ երգած լինի իր եարի այդ ներքին գեղեցկութիւնն ևս—այդ լալտնի չէ, թէ և հաւանական է. բայց մեր ձեռքը հասածներից այդպիսի բան չի երևում։ Սակայն Գուշակը միշտ էլ իր եարով չի զբաղում։ Որքան էլ աշխարհիկ երգիչ լինէր նա, այնուամենայնիւ իր ժամանակի ոգու ծնունդ էր, ուստի և նրա երգի նիւթ է դառնում երբեմն կրօնական բովանդակութեամբ պատմութիւններ, ս. գրքից զանազան դէպքեր։ Այսպէս օր. նա փառաբանում է Աստուծոյ անունն.

«Որ զբարեաց դուռինն է բացեր
Զաշխարհս գեղեցիկ ստեղծեր
Եւ երեք դիմաց բաժաներ
Զհրեշտակս ի լերկինս դրեր.
Ադամայ զղրախտն տուեր
Զերկիրս անասնոց տըվեր
Անբանից տեղիք զսա շիներ» (31)։

Օրհնում է Աստուծոյ ստեղծադրածութիւնը որովհետև Աստուած երբ զաշխարհս արար

Զհողն զջուրն, զքամին հրով
Մթխալ մ' աւելի չարաւ
Կռեց զամէնն չափով» (32)։

Մի այլ տեղ պատմում է Ադամի դրախտից արտաքսուիլը, որի պատճառը օձից խաբուելով թղենու պտուղ ուտելն էր, երգում է թէ ինչպէս Գաբրիէլ հրեշտակը իջաւ երկնքից և աւետեց կուսին նրա «շնորհօք լղանալու» մասին, թէ ինչպէս լի հօրէ առաքեալ բանն ծնաւ մարմնով ի կուսէն և կնիք

կուսին ոչ խախտեցաւ, և թէ ինչպէս ս. կոյսի ասնձն լցեալ շնորհօք ի տէր ցնծացաւ և հոգին ի փրկիչն Աստուած» (30): Ապա նա շարունակում է պատմել Քրիստոսի ծնունդը արի մէջ և լետոյ ինքն էլ միանալով պիառք ի բարձունստ երգող հրեշտակների հետ, օրհնում է այն ամեծ լոյսի՝ ծնունդը, որ «ի լարիւոյն հատեալ առ կոյսն լարն ծագեցաւ» (30—31): Ուրիշ տեղերում Քուչակ երգի նիւթ է շինում Քրիստոսի խաչի վրայ բարձրանալը, կամ ս. գրքից բերած օրինակներով խրատում է լսողին որ եթէ «ճուհար ունի ի խոզուն առջև չը վաթէ», այլ աշխատէ Աստուծոյ ունեցած հացից ձեռք բերել և նորա սկենաց աղբերէն ջուր ըմպել» որ «անմահ մնասցէ»:

Սակայն Քուչակ Նահապետը ս. գրքից քաղած խրատներից զատ ունի և իր սեպական խրատները, որ բառական մօտենում են այժմեան մեր ժողովրդական մի քանի խրատական առակաւոր դարձուածներին: Իր խրատների մէջ Քուչակը գըլխաւոր ուշադրութիւն դարձնում է ազիտութեան վրայ: Նա նմանեցնում է միտքը մի նաւավարի, որ բարձեր է իր նաւին շատ «չահաւոր գանձեր» և աշխատում է ծովի ափը հասնել: Ուսումը մի լոյս է, որ վառուելով ազէտի հոգում, լուսաւորում է նրան մթութեան մէջ. ուստի խրատում է միշտ «սիրով ուսման ջանալ»: Նոյնպէս խրատում է, որ մարդիկ դատարկ գլխով «բարձրագնաց» չլինին, այլ ընդհակառակը պտղով ծանրաբեռնուած ճիւղի պէս խոնարհ լինին: Երգիչը ասում է որ առնասարակ պէտք է խրատել նրան միայն, ով խօսք է լսում. ալիպիսի մարդու հետ՝ հարկաւոր է ընկերանալ և ցոյց տալ, որ «անշահ, անօգուտ բան ու մեղադրանք է ջուֆր ասելն», որ մարդ «զալլոց մեղքն քննելու» փոխարէն՝ «երկար մտօք» իրեն պիտի քննէ և «զմահուն օրը միշտ լիչէ» (32, 36, 37): Երբէք բարեկամութիւն մի արա այն մարդու հետ, որ քո գնալուց լետոյ քեզ բամբասում է: Ալիպիսի չըջապատի մէջ դու պիտի հաւատաս միայն քո բազուկին:

«Քանի բազուկդ ի բան կենալ

Նատ եղբայր ու շատ սիրելի:

Բազուկդ ի բանէ ընկնի,

Ոչ եղբայր և ոչ սիրելի» (35):

Եւ լետոյ երգիչ Նահապետը օրհնում է իր խրատները պահողին և ազօթում որ նա «զանոնց բարին վալելէ»:

Բացի սոցանից Քուչակ Նահապետի երգերում գտնում

ենք և միջնադարեան առակաների և անէծքների օրինակներ
ևս: Օր. համար, նա մի տեղ անիծում է նրան, ամ որ սիրտը
տէր մարդուն չողորմիտ. այդ անողորմ մարդը լթող մեռնի,

իր մահն ի մորին լինի

Ձեր բերնին հաղորդ չգտնուի.

Աղուէսն իւր լալկան լինի,

Գալլ ու ագռաւն իւր հարեզանի,

Շունն ալ իւր մատաղ լինի

Ու ազին զէտ մոմ թող վառի» (33):

Մի ուրիշ տեղ Նահապետը այս կերպ երգի նիւթ է չլի-
նում երեք զանազան առականեր, որոնց նիւթն է առիւծի,
չահէնի և կաքաւի որսը, եղնիկի եղջիւրը և գեանին կուտ
չուտող հաւը:

Ահա, գրեթէ, սոքա են կազմում Քուչակ Նահապետի
քնարի բովանդակութիւնը և իր գաղափարները տեսանք թէ
ինչպէս է երգում: Բայց հարց կարող է ծագել թէ՛ հապա թնչ
է երգում Նահապետը իր ժամանակակից կեանքից: Այս հար-
ցին, դժբաղդաբար զրական պատասխան տալ չենք կարող: Իր
ժամանակակից կեանքը նրա երգերում գրեթէ մի տողի տեղ ան-
գամ չի գտել: Նա ապրում էր ԺՁ. դարում, աչնպիսի մի ժա-
մանակ, երբ Պարսից ու Օսմանցոց կռիւները Հայոց երկրում
անպակաս էին: Սէլիմ-Սուլթանը և Շահ-Իսմայէլը իրենց կռիւ-
ներով աւերեցին Հայաստանը մինչև 1515 թիւը, Չալդրանի
դաշնադրութիւնը, սակայն զրանից լետոյ էլ երկիրը խաղաղ
չէր: Շարունակ հալածանք, կեանքի անապահովութիւն և ալդ
բաւական չէր, վրալ հասաւ 1517-ին Սէլիմ-Սուլթանի և
1543-ին Սուլէյման Սուլթանի անազորոյն հրամանները—հա-
ւաքել ամեն կերպ քրիստոնեայ մանուկներ և Պօլիս ուղար-
կել—ընդդիմացող մայրերը գլխատում էին և երկրի իրարան-
ցումն ընդհանուր էր: Քիչ լետոյ Թահմազ Ա. արչաւում է
Հայաստան և իր ասպատակութիւններով ընդհարում է Սու-
լէյման Սուլթանի հետ, և այս երկուսի կռիւների մշտական
հետևանքն էր ժողովրդի կամովին գաղթը կամ փախուստը,
կամ լաճախ մոլեռանդ միապետների ձեռքով կատարուած գե-
րեվարութիւնները: Ահա այսպիսի մի ժամանակ է ապրել մեր
Քուչակ Նահապետը և միանգամայն զարմանալի է մնում մեզ
համար թէ ինչպէս է, որ այսպիսի հանգամանքերի մէջ
ապրող երգչիչը ահագին կտորներ է նուիրում իր երգերի մէջ:

իր եարի գովասանքին, բայց մի քանի խօսքով, զէթ մի ան-
ցողակի ակնարկութիւն անգամ չի անում իր ժամանակի դառն
վիճակի վրայ, որի մէջ ինքն ապրել է, հետեապէս և ամեն
վարկեան այդ վիճակի դառնութիւնը զգացել: Սակայն, գու-
ցէ, Նահապետը այդպիսի բովանդակութեամբ երգեր գրել է
բայց մեր ձեռքը չեն հասել: Այդ հաւանական է, բայց առ
այժմ մեզ հասածներէց այդպիսի բան չենք տեսնում: Արկու-
տեղ միայն Քուչակի երգերում դառն վիճակի արտաբայութեան
տողեր ենք գտնում, սակայն պիտի ստիպուած լինենք
այդ մի քանի տողերը խիստ ալլաբանութեամբ բացատրել, որ
կարողանանք ասել թէ դրանով իր ժամանակի մասին ակնար-
կութիւն է անում: Այսպէս օր. երգիչը մի տեղ սարսափելի
բան է ներկայացնում «մարդո՛ւ շառը», զրպարտութիւնը, և
այդ «շառն այնչափ չար է, որ գազանն իրմէն կու վախէ»
(35): Մի ուրիշ տեղ երգիչը ներկայացնում է հաւի սողորմ ու
լալի» վիճակը, որ «ոչ գիշերը քուն ունի և ոչ ցերեկն ի վար-
կու կանգնի», ալլ միայն «մէկ պահ մի դադար ունի» և այդ
էլ այն ժամանակ, երբ «լոտիցն ի վար կու կախուի» և «եր-
կու կաթ արիւն» թափելով աչքերը «կու թռչի» (36): Չուր-
կլինէր ընդունել թէ այս օրինակներով երգիչը իր ժամանակն
է ակնարկում, որովհետեւ առաջին՝ Քուչակի պէս մանրամաս-
նութիւններ սիրող մէկը իր ժամանակակից կեանքի մասին
զաղափար տալու համար դժուար թէ բաւականանար մութ,
այն ևս հեռաւոր ալլաբանական ակնարկներով, և երկրորդ՝
ոչ միայն «մարդու շառը» կամ «հաւը», ալլ և շատ լաճախ եր-
գիչները այնպիսի բաներ են իրենց երգի նիւթ շինում օր-
կարծես միայն ժամանակ անցնելու համար են գրել, օրինակ
մէկը գովում է իւր հայրենիքի հարիսան, միւսը հիանում է
իր չախուի (դանակի) վրայ, մի ուրիշը գովում է իր թաշկինակը,
չորրորդը գանդատում է իրեն անհանգիստ անող ճանճերից և
ալլն ¹⁾: Հետեապէս և Նահապետի այս տողերը մարդու շառի
և հաւի մասին ուրիշ ոչինչ չեն, բայց եթէ խկապէս հաւի վի-
ճակի վրայ խղճահարութիւն և մարդու շառի վրայ զգուանք

ՅՈՒՆԱՆԵՆԻՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ

(Վերջը միւս անգամ)

¹⁾ Առասանեան. Հոր ժողովածու I. եր. Գ.